



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ
ՀԱԶԱՐՎԵՑՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Սիրեցյալ հավատացյալ զավակներ Մեր.
Դարեր առաջ, երանելի օր մը, 405 թվա-
կանին, մեր աշխարհին մեջ մեծահանդես
բափոք մը կշածվեալ զեպի երկրին հարավա-
յին սահմանները: Հայոց արքան՝ Վուստա-
պոմ և Հայոց Հայրապետը՝ Սահակ Պարբե.
հայ ժողովուրդի մեծամեծները և զորք և
բազմահազար շինական ժողովուրդը, Ռան
գետի ափին, «Ուսանեա»-ներով կղիմալո-
րին հայ հոգևորական մը՝ Մեսրոպ վարդա-
պետ Մաշտոց:

Ո՛վ էր այդ վարդապետը:— Պարզագգեստ,
համեստ վանական մըն էր ան, որ հեռավոր
նամբաներե, մաշած տրեխներով, կվերա-
դառնար հայրենի տուն:

Եվ ի՞նչ կրեբեր իրեն հետ այդ վանակա-
նը: Ո՛չ ոսկի, ո՛չ բեհեզ, ո՛չ գեմբ, ո՛չ զորք և
ո՛չ ալ տիադաներ: Մեսրոպ Մաշտոց իր ժո-
ղովրդին ընծա կրեբեր նշանագրերը մայ-
րենի լեզվին, արգասիքը իր լուսափայլ հան-
հարին և իր մեծ սրտին:

Սուրբ Մեսրոպ հորինած էր հայ լեզվի
տառերը և անոնց մեջ բյուրեղացուցած և
կաղապարած էր Արարատյան դաշտի վրա
խոսված հայերեն լեզվի հնչյունները: Ժո-
ղովուրդի խոսած լեզվի շաղախին ձև և կա-

նոն տված էր ան, կոչելով հայոց լեզուն
հավետ մշտանորոգ կյանքի: Սակայն սխալ
պիտի բլլար Մեսրոպ Մաշտոցը նժարի վրա
դնել միայն հայ տառերու իր գյուտով և
Աստվածաշունչի բարգմանությամբ: Անտա-
րակույս, հանճարեղ են այդ գործերը և մեծ
հաղթանակները կհանդիսանան իր իմացա-
կան ուժերուն և իր հայրենասիրությամբ,
բայց իր գործը, իր առաքելությունը և իր
ժառանգությունը ավելին են: Արդարև, Մեծ
Վարդապետը, բյուրեղացնելով հայ լեզուն
և դարձնելով զայն գրական լեզու, բյուրե-
ղացուց նաև հայ մտածողությունը, հայ
իմացականությունը, վասնզի հայտնի է մե-
զի այսօր, քե լեզուն և մտածումը միատեղ
կանին ու կգարգանան և զիրար կպայմա-
նավորեն:

Եվ ավելին տակավին. հայ իմացակա-
նության զարթոնքով ու զարգացումով, տա-
կավ արքնցան ու անեցան Հայ Ազգի հոգե-
կան բոլոր բաժնի ուժերը և այսպիսով
հետզհետե ծնունդ առին, հետզհետե նորա-
նոր կատարյալ ձևեր ստացան ու բարձր
կատարներու հասան հայ բանաստեղծու-
թյունը, հայ ճարտարապետությունը, երա-
ժշտությունը, նկարչությունը և մյուս ար-

վեստները: Ամեն իսկապես հայկական և վավերական արժեք, մեր անցյալին մեջ, ծնունդ կառնե Սուրբ Մեսրոպի տեսիլքն ու հանճարեն:

Մեսրոպ Մաշտոց, Փրկչի Իշման տեղեն առած իր ներշնչումներով, իր արարչագործ ոգեկան ուժերով, իր ստեղծարար աշխատանքով և դարերուն բողած իր մեծ ժառանգությամբ, հիմնադիրն է, հայրն է հայ մշակույթին, բառին ամենալայն և ամենաերջմարիտ իմաստովը:

Տակավի՛ն իր ձևերը փնտռող, մշուշապատ հայ հոգեկան աշխարհին մեջ, փայլատակեց Սուրբ Մեսրոպի արարչագործ պատգամը՝ «Նդիցի լոյս»: «Եւ եղև լոյս»: Սուրբ Մեսրոպի հանճարով, հայ ժողովուրդը իր կյանքի սեփական հանապարհը գտավ: Գտավ իր ինքնությունը և աղբյուրը իր ոգեկան ուժերուն: Գտավ իր ոճը: Եվ ամբողջ Ազգ մը ահա, ավելի քան հազար և հինգ հարյուր տարիներն վեր, այդ ոգեկան-իմացական ձևերուն մեջ, կծուկե, կդարբեն իր մտածումները, իր հույզերը և իր տենչերը, առանց հիեր կրկնելու, այլ միշտ նվանելով նորանոր ու անմատչելի բարձունքներ մշակութային ստեղծագործությանց հորիզոնին վրա:

Մեսրոպ Մաշտոց իր ժողովուրդի հարագատ զավակն է: Իր տեսիլքներով, իր էանհարով ու ստեղծարար գործերով արտահայտիչն է հայ ժողովուրդի սպասումներուն, հայ ժողովուրդի ապրումներուն, հայ ժողովուրդի իմացական ու ոգեկան հնարավորություններուն: Եթե այդպես չըլլար. Մեսրոպ առանձին կմնար մեր պատմության մեջ և իր ժառանգությունը շատոնց ի վեր ժամանակի մոխիրներուն տակ թաղված ու կորսված:

Եթե Մեսրոպ Մաշտոց կարողացավ մշակույթի արև շահը վառել Հայոց Աշխարհին մեջ, հայ ժողովուրդն ալ կարողացավ այդ շահը վառ պահել տիրաբար ու փոխանցել զայն սերունդե սերունդ և հասցնել մինչև մեր օրերուն, մեր սերունդին: Եվ այսօր, այդ շահը կշռող փառքի մեջ, վերածնած Հայրենիքի փաղափամայր Երևանի Մատենադարանին, Հայաստանի պետական համալսարանին,

հին, Դիտուրյանց կանադին և բազում գիտական, գեղարվեստական, կրթական, մանկավարժական ուսումնարաններուն և հաստատությանց կամարներուն ներքև:

Մեր ժողովուրդը համբաճում փոքր է, սակայն մեծ է իր հին և նոր մշակույթի արժեքներով: Գաղտնիք չէ ոչ ոքի համար, քե մանավանդ մեր Մայր Հայաստանի նոր և խաղաղ ու ապահով պայմաններուն մեջ. ոչ միայն աշխի լույսի պես կպահպանվին ու կգնահատվին հայ մշակույթի հին վավերական արժեքները, այլ նաև, շնորհիվ մեր Ազգի տաղանդաշատ զավակներու ներշնչումին ու աշխատանքին, կստեղծվին նոր արժեքներ, հարստացնելով հայ մշակույթի բազմադարյան մեծ գանձարանը: Եվ ավելին. փոքր չէ թիվը այսօրվան մեր հայրենի գիտնականներուն և արվեստագետներուն, որոնց գործերը շատոնց անցած են հայ կյանքի սահմանները և զնահատանքին առարկան դարձած մեր օրերու փաղափակիր ազգերուն: Արհամարհելի չէ նաև թիվը հայ գիտուններուն և արվեստագետներուն Սփյուռքի հայության ծոցին մեջ, որոնք հարագատ արտահայտությունը կհանդիսանան նույն հայ ժողովուրդի տաղանդին ու շնորհներուն:

Հայ ժողովուրդը մշակութաժին ժողովուրդ եղած է անցյալին մեջ, մշակութաժին ժողովուրդ է նաև այսօր: Այս է մեր Ազգի ամենաբնորոշ հատկանիշը: Այս իրողության մեջ է մեր ժողովուրդի գոյության իմաստը: Այս նշմարտության մեջ է նաև մեր Ազգի ապրելու իրավունքը:

Մենք կհավատանք Սուրբ Մեսրոպին և անոր ժառանգության: Մենք կհավատանք հայ լեզվին ու հայ մշակույթին: Մենք կհավատանք մեր ժողովուրդի ստեղծագործ ուժերուն: Մենք կհավատանք մեր հայրենի նոր կյանքին և նոր արժեքներուն: Մենք կհավատանք մեր Ազգի ապագային: «ՅԱՅՍՄ ՀԱՒԱՏՈՅ ԶՄԵՉ ՈՉ ՈՔ ԿԱՐԷ ԽԱԽՏԵԼ»:

Այսօր, Սրբոց Թարգմանչաց տոնին, մեր Եկեղեցին կտոնե Սուրբ Մեսրոպի ծննդյան 1600-ամյակը: Եվ մենք այստեղ, Օշականի մեջ, Մեծ Վարդապետի իսկ գերեզմանին վրա կառուցված այս տաճարի կամարեն-

րուն տակ, հանդիսավոր սուրբ պատարագի մատուցմամբ կփառավորենք իր պայծառ հիշատակը: Եվ մխիթարական է մեզ համար, որ թե՛ մեր Մայր Հայրենիքի և թե՛ Սփյուռքի մեջ պիտի տոնվին և պիտի փառաբանվին Մեծն Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը, 1961 թվականը հոբելյանական նվիրական տարի ըլլալով մեր ամբողջ ժողովուրդին համար անխտիր:

Մեսրոպ Մաշտոց իրաւովորեց համայն Հայ Ազգը և բոլոր ժամանակները: Ուրեմն մեր ժողովուրդը ևս համազգային ցնծությամբ ու երախտագիտությամբ պիտի տոնեն իր սփանշեղազործ Մեծ Վարդապետը:

Օշականի Սուրբը մեզ կուսավորեն նաև այսօր, մեզ կգորացնեն նաև այսօր, և մեզ

կդարձնեն ավելի քան երբեք լավատես ու գոտեպինդ, հայրենի պայծառ արևին տակ: Եվ կյանքի կկոչվի այն ուխտը, զոր կես դար առաջ մեծ բանաստեղծը կկատարեր իր խոսքը հայ ժողովուրդին ուղղելով. «Մենք, ԶԱՎԱԿՆԵՐԴ ՕԳՈՍՏԱՓԱՌ, ՊԻՏԻ ԿԵՐՏԵՆՔ ՆՈՐ ԱՐՇԱԼՈՒՅՍ»:

Ահավասիկ, մեր Մայր Երկրի հորիզոնին վրա ծագած է նոր արշալույս:

Փա՛նք Սուրբ Մեսրոպի լույս հիշատակին: Փա՛նք հայ մշակույթին, փա՛նք հայերեն լեզվին, փա՛նք հայ ժողովուրդին:

ՀՆՈՐՀԹ ԵՒ ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ԶԵԶ ԱՅԺՄ ԵՒ ՅԱԻԻՏԵԱՆ»:

Ամեն:

